

ՀՈԳՆԱԿԻ ԹԵ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ

ԴԱՅԱՆՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավաքականության կարգի և թվակարգի հարաբերությունը շահագանցելու ու տարակերպ է: Թերևս դա է պատճառը, որ լեզվաբանության մեջ հավաքականության կարգի տեղի ու բնույթի վերաբերյալ բազմաթիվ տարակարծություններ կան: Որոշ լեզվաբաններ այն համարում են բառաքերականական կարգ՝ ձևաբանական, բառակազմական և շարահյուսական մի շարք առանձնահատկություններ ունեցող բառերի դաս (ՀՊ, ԳԹԿՀ, 71), մյուսները՝ քերականական, քերականական ուղղակի տիպ ունեցող բառերի դաս (ՊՓ, ԿՏԻՏ, 48), ուրիշ լեզվաբաններ էլ այն դիտում են իբրև հոգնակի թվի դրսևորումներից մեկը (ԱԿ, ԴՏՏՏ, 94):

Վերջին ժամանակներս թվի կարգի վերաբերյալ մեծ տարածում էր ստացել Ա. Իսաչենկոյի տեսակետը, ըստ որի, թվակարգային ձևերի տարբերական հիմքում դրվում է «բաժանականություն—ոչ բաժանականություն» (расчлененность—нерасчлененность) հակադրությունը: Այս հակադրության ուժեղ «նշույթավոր անդամ» է համարվում հոգնակի թվաձևը: Թվակարգը ներկայանում է իբրև «լրիվատիվ (մասնական) հակադրություն, որի ուժեղ անդամը (հոգնակի թվաձևը) կրում է բաժանականության անայլակային նշանակությունը, մինչդեռ եզակի թվաձևը ներկայանում է իբրև թույլ, «ոչ նշույթավոր անդամ»: Ըստ Իսաչենկոյի, «ոչ բաժանականության» անայլակային նշանակությունը թույլ է տալիս եզակի թվաձևով արտահայտել բաղմունքի գաղափար, ինչպես, օրինակ, հավաքականների մեջ (եզակի թվաձևով հոգնակի իմաստ): Անեզակի գոյականների «բաժանականությունը» վերաբերում է առարկայի այսպես կոչված «ներքին կառուցվածքին», օրինակ *девушка, женщина, профессор*, ինչպես նաև բաղմունքի գոյականների դեպքում՝ *матрица, ядро, ветка, мать, сосиски* (տե՛ս ԱԻ, ԴՀ, 37—38): Սակայն մի շարք լեզվաբաններ ուժեղ, նշույթավոր անդամներ են համարում թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվաձևերը: Դրանցից առաջինը արտահայտում է մեկ որոշակի առարկայի նշանակություն, մյուսը՝ անորոշ թիվ, ավելի ճիշտ՝ անորոշ բաղմունք (տե՛ս ԱԿ, ԴՏԻՏ, 61): Կարելի է բերել նաև հոգնակի թվաձևի այսպես կոչված «ոչ նշույթավոր» կիրառության օրինակ, երբ այն ոչ մի ինֆորմացիա չի տալիս հոգնակիության մասին բնահանրապես, օրինակ. «Чему тебя только в университете учили» (ՕԼ, ՓՏԿՏ, 136):

Այսպիսով, հոգնակիությունը կարող է ունենալ երկու հիմնական դրսևորումներ՝ բաժանական և հավաքական: «Հավաքականությունը տարբերվում է հոգնակի թվից, որը ցույց է տալիս մի քանի առարկա առանց նրանց միասնականությունը նշելու» (ԱԴ, ՏՐԼԿ, 155): Շախմատովը նշում է, որ հավաքականության կարգը լրիվաբար է շփոթել հոգնակիության կարգի հետ, հոգնակի նշանակություն ունեցող բառերը բաժանվում են բաղկացուցիչ միավորների,

1 Տե՛ս А. Исаченко, О грамматическом значении, с. 37.

Նման մոտեցումը նոր չէ: Դեռևս Վ. Վինոգրադովը նշում է, որ ռուսերենում թվի ուժեղ ձև համարվում է հոգնակի թվաձևը, քանի որ նրա գործառության հետ ավելի շատ առնչվում է փոխարկական իմաստների և ռեական տարրեր ներբրանդների կիրառությունը: Ընդ որում, դրա կիրառության առանձնահատկությունների հետ է կապված նաև այն հոնգամանքը, թե ավելի հոգնակին արտահայտում է բաժանական, թե՛ հավաքական բաղմունք՝ մեկ ամբողջություն (տե՛ս ԵԵ, ՔԿ, 148):

իսկ հավաքական նշանակությամբ բառերը, հակառակը, ցույց են տալիս մարդկանց կամ առարկաների միավորում, որ դիտվում է որպես մեկ ամբողջություն» (АШ, ОСРЛЯ, 131):

Անշուշտ, այստեղ հոգնակիության տակ նկատի է առնվում բաժանական հոգնակին: Իսկ ի՞նչ է բաժանականությունը: «Բաժանականությունն այն է, երբ բառիմաստի ընդհանրության մեջ տրվածը ներկայանում է իբրև միավորների այնպիսի շարք, որի նկատմամբ կարելի է կիրառել մեկի և մեկից ավելի քանակային հարաբերության իմացական ասպեկտը (հայեցակետը)» (ՀՊ, ԳԹԿՀ, 27): Ի տարբերություն բաժանականության, որն ընդհանրապես դուրկ է որևէ կարգի որակային որոշակիությունից և հիմնվում է միայն թվային-քանակային հատկանիշի վրա, հավաքականությունը բնորոշվում է որոշակի որակային հատկանիշներով, որը տվյալ բազմության մեջ մտնող միավորների տարբեր հատկությունների հանրագումարն է, սակայն որը երբեք չի նույնանում նրա մեջ մտնող յուրաքանչյուր առանձին վերցրած միավորի հետ: «Հոգնակիության հավաքական տիպը ըստ էության ունի այլ առարկայնություն, քան նրա հետ հարաբերակցվող եզակին» (ВП, ТГКЧ, 28): Հետևաբար, իմաստային տեսանկյունից, ի տարբերություն բաժանական հոգնակիի, հավաքական հոգնակին անտարբեր է բազմության մեջ մտնող եզակիի նկատմամբ, նրա համար էականը ընդհանրականն է, միասնականը, որը հանդես է գալիս իբրև մեկ միավոր: Հավաքականներն ասես մի տեսակ կապող օղակ են եզակիի և ընդհանրի միջև (տե՛ս ն. տ.), և, հետևաբար, հավաքական բառը կարող է արտահայտված լինել թե՛ եզակի և թե՛ հոգնակի բառաձևերով, ինչպես նաև լինել անեզական, անհոգնական (ընդ որում հավաքականակերտ ածանցներով կազմված հավաքականները հիմնականում անհոգնականներ են, օրինակ՝ նամակաճի, մարդկություն):

Հայտնի է, որ հավաքականները հաճախ կիրառվում են հոգնակի թվաձևերի փոխարեն, սակայն դրանց կիրառությունը ավելի սահմանափակ բնույթ ունի, քանի որ նախ՝ բոլոր բազմությունները չէ, որ կարող են դիտվել իբրև մեկ միասնական ամբողջություն և երկրորդ՝ հավաքականները հոգնակի թվաձևերի պես՝ չունեն կազմավորման մեկ համընդհանուր եղանակ՝ հաստատուն մոդել. հավաքականության նշանակությունը կարող է տրված լինել՝ 1. անմիջականորեն բառիմաստի մեջ, 2. հավաքականակերտ մասնիկների միջոցով, 3. որոշակի բառերի միջոցով և 4. այլևայլ եղանակներով՝ կապված եզակի և հոգնակի թվաձևերի փոխաբերական կիրառությունների հետ (հմմտ. 1. ժողովուրդ, երամ, стажа, flock, 2. բանվորություն, кынечество, community (համայնք) 3. մի խումբ մարդիկ, a group of students (մի խումբ ուսանողներ) 4. հետադիմականներ, զանգուրներ, ошощи, ноты, filings (մետաղի խառուրդ) և այլն): Ահա թե ինչու հավաքականների կիրառությունը պակաս աղատ է, քան հոգնակի թվաձևերինը: Միևնույն ժամանակ, հայտնի է, որ հավաքական թիվը ծագումնաբանորեն նախորդել է հոգնակի թվին և հիմք է հանդիսացել նրա կազմավորման համար՝ թե՛ իմացաբանական և թե՛ կառուցվածքային տեսանկյունից: Հավաքականության և հոգնակիության (բաժանական) կարգերը պատմական առումով դիտվում են որպես թվային հարաբերությունների լեզվական արտահայտման տարբեր էտապներ: «Լեզվի մեջ թվականների առաջացումը, թվի քերականական կարգի սահմաններում հավաքական հոգնակիի տարբեր տիպերից անցումը վերացական, բաժանական հոգնակիության վկայում է թվի կարգի զարգացման հաջորդ փուլի մասին: Այս փուլում թվի կարգն ասես աղատվում է որակի կարգի ազդեցությունից և հասնում է վերացականության ամենաբարձր աստիճանին» (ВП, КМЯ, 128—129):

Հավաքականների՝ հոգնակի թվաձևերի շարքն անցնելու մասին վկայում են շատ գիտնականներ: Դեռևս Յո. Շմիդտը ցույց է տվել, որ հնդեվրոպական նախալեզվում չեզոք սեռի բառերի հոգնակի ուղղականի համար կիրառվում էին եզակի թիվով դրված և ²-а/э -ով վերջացող հավաքականները, որոնք արգենպատմական շրջանում դիտվում էին իբրև չեզոք սեռի հոգնակի ձևեր, իսկ իզա-

կան և արական սեռի հոգնակի ուղղականն ունեն իր կցական կառուցատիպով բառաձևերը, որոնք ցույց էին տալիս բաժանական հոգնակին (հմմտ. օրինակ, վեդ. *Saiva ta te api devēshu* «Այս բոլորը քոնն է աստվածների մոտ») (տե՛ս, JS, PIN, 4—6):

Նման օրինակներ են բերում նաև սլավոնագետները: Այսպես, ռուսերենում, օրինակ, դեռևս հնագույն տեքստերում հանդիպում են հոգնակի ձևեր՝ կազմելով ձև *-ue(-ъе)* հավաքականակերտ մասնիկով: XV—XVI դդ. -ՅՋ-ով կազմելով հավաքական ամբողջություն, աստիճանաբար վերակառուցվում են իբրև հոգնակի ձևեր (հմմտ. *братъя, братья, братья, братья, братья*):

Գերմաներենում այժմ իբրև սովորական հոգնակի ձևեր են դիտվում *ge-* նախդիրով մի շարք կազմություններ, որոնք նախկինում հավաքական իմաստ էին արտահայտում. ալպես, *geschwister* բառը սկզբնապես նշանակել է «քույրեր»՝ հավաքական նշանակությամբ, հետագայում՝ «եղբայրներ և քույրեր», ապա իբրև սովորական հոգնակի (տե՛ս OE, ΦΓ, 226): Հին անգլերենում, որտեղ հավաքականները հիմնականում բառային արտահայտություն ունեին և հավաքականություն էին ցույց տալիս անմիջականորեն բառիմաստի միջոցով (մի շնչին մասը միայն ձևաբանական կազմավորում ունեն), հավաքական բառերը ձևեր են բերում բաժանական հոգնակի իմաստ: Ինչպես նշում է Զ. Կոտովան, միջին անգլերենի շրջանում հավաքականների կիրառությունը՝ որպես սովորական հոգնակի ձևեր, երեք անգամ ավելի շատ է, քան հին անգլերենում: Այնպիսի բառերում, ինչպիսիք են *police* (սպիկառնություն), *people* (հմմտ. հայ. մարդիկ) սկսում է զարգանալ բաժանական հոգնակիության գաղափարը, իսկ հավաքականության, բազմության՝ իբրև մեկ միասնական ամբողջություն, նշանակությունն աստիճանաբար մարում է (տե՛ս ЗК, ССАР, 187): Նման օրինակներ կարելի է բերել բազմաթիվ հնդեվրոպական լեզուներից, և այս առումով, անշուշտ, բացառություն չէ նաև հայերենը, որն իր թվականությունը զարգացրել է նախկին հավաքականակերտ մասնիկների հիման վրա (տե՛ս ԳՊ, ՀՄՄՀԲ, 195—204):

Որոշ լեզուներում հավաքականության կարգը լավ պահպանվել է և անդամ դարձել է ավելի կենսունակ: Այսպես, այն համեմատաբար հաստատուն ձևով պահպանվել է սերբախորվաթերենում, որտեղ հաճախ ուղղականով դրված ենթական արտահայտված է լինում հավաքական անվամբ, որը դուրս է մղում, երբեմն էլ լրիվ փոխարինում է հոգնակի թվի քերականական ձևերին (տե՛ս ВД, КЧСЯ, 97): Նոր բուլղարերենում սովորական հոգնակի թվաձևերի փոխարեն հաճախ կիրառվում են հավաքական ձևերը: Վերջիններս բարբառային ներթափանցումների արդյունք են: Հավաքական ձևերը սովորաբար վերաիմաստավորվում են իբրև հոգնակի ձևեր և կիրառվում են գրական լեզվի հոգնակի ձևերի հետ մեկտեղ (ն. տ., 95—96):

Ասվածից հետևում է, որ հոգնակիության հավաքական և բաժանական տիպերի փոխհարաբերությունը բավական բարդ է, և հաճախակի են անցումները մի խմբից մյուսը: Այնուամենայնիվ, որոնք են այն չափանիշները, որոնք միջոցով, այս կամ այն չափով, կարելի է որոշել տվյալ բառաձևը հոգնակի՞ է, թե՞ հավաքական:

Լեզուն իր զարգացման տարբեր փուլերում հոգնակիության թե՛ բաժանական և թե՛ հավաքական տիպերի համար մշակել է լեզվական արտահայտության որոշակի միջոցներ: Սովորաբար նշվում է, որ հոգնակիության արտահայտման յուրաքանչյուր ձևի համար լեզուն ունի որոշակի մասնիկներ: Մասնիկավոր կազմության արտահայտած իմաստը կախված է ոչ միայն այն բանից, թե տվյալ դեպքում որ մասնիկն է միացել բառին, այլև նրանից, թե պատմական զարգացման որ շրջանին է վերաբերում տվյալ բառը, քանի որ իմաստային փոփոխությունների են ենթարկվում ոչ միայն բառերը, այլև մասնիկները (հոգնակերտները): Այսպես, հին հայերենում հոգնակիություն ցույց տալու համար կիրառվում էր ք մասնիկը, հավաքականության արտահայտման

համար գոյություն ունեին մի շարք մասնիկներ՝ ալան, աւն, ոտի, եւար, -նեար և այլն, նոր հայերենում հոգնակիություն ցույց տալու համար հիմնականում կիրառվում են -հր, -նեւ մասնիկները, հավաքական բառեր էադմելու համար ևս գոյություն ունեն մի շարք մասնիկներ՝ ություն, -եղես, -աւնք, -ոնք, -ստան և այլն: Վերջիններով կազմված բառերի արտահայտած իմաստն այլ է, քան սովորական հոգնակերտներով կազմություններինը, օրինակ՝ Խաշիկենք նշանակում է ոչ թե Խաշիկներ, այլ ցույց է տալիս Խաշիկի ազգականների, բարեկամների, կողմնակիցների բազմությունը, հավաքական ամբողջությունը, երկաթեղեն՝ նշանակում է ոչ թե երկաթներ, այլ հրկաթից պատրաստված առարկաներ, իրեր և այլն:

Միևնույն բառը հաճախ կարող է երկու տարբեր հոգնակի ձևեր ունենալ՝ հավաքական և բաժանական, օրինակ՝ ուռ. камень—каменья—камни корень—коренья—корни; прут—прутья—пруты, անգլ. Index—Indexes—Indices /ինդեքս—ինդեքսներ/: pea—peas—pease /ոլոռ—ոլոռներ/: penny—pennies—pence /պեննի—պեննիներ/:

Հոգնակերտ և հավաքականակերտ մասնիկներով կազմություններն ունեն նաև շարահյուսական կիրառության հետ կապված առանձնահատկություններ: Հավաքականակերտներով կազմությունները սովորաբար պահանջում են եզակի թվով ստորոգյալ, լրացումներ (եթե լրացումը թվով համաձայնում է լրացյալի հետ): Հետևաբար, հավաքականակերտներով կազմությունները հիմնականում եզականաձև են (հայերենում թերևս, բացի -աւնք, -նեւ, -ոնք, -ստենք անեզականակերտ-հավաքականակերտներով կազմված բառերից): Սակայն հին լեզուներում ստորոգյալը (նաև լրացումները) սովորաբար դրվում էր հոգնակի թվով, հատկապես եթե հավաքականը ցույց էր տալիս մարդկանց բալմություն: Այսպիսով, տեղի ունեւ համաձայնությունը ըստ իմաստի (շահապաշտություն): Օրինակ՝ «Եւ լուեալ զայս քազմութեանն որ էին ի շահաստանին» (ՂՓ, ՀՊ, 212), «Ի նոյն միտս և ի նոյն խորհուրդս հաստատեալ են բովանդակաւ աւագանի աշխարհին» (ՂՓ, ՀՊ, 46), «Մարդիկ ամրոցին ոչ անսացին մեալ համբաւուն Պապայ» (Մխ, ՀՊ, 364): Դժվար է որևէ կերպ բացատրել թե որն է այս երևույթի պատճառը: Որոշ լեզվաբաններ կարծում են, որ նման օրինակները ցույց են տալիս, որ հավաքականություն՝ իբրև մեկ ամբողջություն, հաղափարի ընկալումը հին մամանակներում այլ է եղել:

Այսպիսով, հավաքականակերտ մասնիկները, ի տարբերություն հոգնակերտների, բառին հավաքական իմաստ են տալիս, և սովալ դեպքում հավաքականների տարբերակումը առանձնապես բարդ չէ: Փորձենք ավելի մանրամասն անգ առնել այն դեպքերի վրա, երբ դժվար է կողմնորոշվել՝ տվյալ բառը հոգնակի՝ է, թե՞ հավաքական: Հավաքական հոգնակիի և բաժանական հոգնակիի ներքին փոխազդեցությունն ընթանում է նաև հոգնակի ձևերի բառայնացման և անապարհով: Նախկին հոգնակերտներն ածանցական արժեք են ստանում: Դա հանգեցրեց անեզականների որոշակի խմբերի գոյացման, օրինակ՝ միտք, ծախք, վարք, տարեք, овоши, одежда: Այստեղ մենք գործ ունենք թերևս բացասման բացասման օրենքի դրսևորման հետ: Նախկին հավաքականակերտները որոնք պատմական զարգացման ընթացքում ձեռք էին բերել բաժանական հոգնակիության նշանակություն, նոր լեզուներում որոշ բառերում հոգնակիության հետ սկսում են ցույց տալ նաև հավաքականություն: Այսպիսով, մասնիկն անցնում է հետևյալ ճանապարհը՝ հավաքականակերտ (նրանով կազմված բառերը ցույց են տալիս հավաքական բազմություն)→հոգնակերտ-հավաքականակերտ: Օրինակ, գրաբարյան -եւր, -նեար հավաքականակերտ մասնիկները միջին հայերենում հաստատվում են իբրև հոգնակերտներ, հայերենի զարգացման նոր փուլում դրանք որոշ բառերում ձեռք են բերել նաև հավաքական երանգներ, օրինակ՝ կանաչներ, գաւաւներ:

Մի շարք լեզուներում բավական տարածված են անեզական հավաքականները: Սովորաբար սրանց մեջ են մտնում հոգնականաձև այն գոյականները,

որոնք հոգնակիության հետ մեկտեղ արտահայտում են նաև բազմության, միասնականության գաղափար (կամ ինչպես նշում են որոշ լեզվաբաններ, հոգնակիության իմաստություն) (сема множественности) հետ մեկտեղ ունեն նաև բազմության իմաստություն (сема совокупности) (տե՛ս АШ, ИССФР, 30): Օր.՝ գերմ. *die Annalen* (առեգություն), անգլ. *archives* (ախիվ), ռուս. *сумерки, алименты*, հայ. ֆինանսներ, զանգուրներ: Հաճախ անհզականներն արտահայտում են նաև դուշգայնության գաղափար. ծնողներ, երկվորյակներ, անգլ. *moustaches* (րեղեր), ֆր. *parents* (ծնողներ), ռուս. *брюки, очки*, գերմ. *die Zwillinge* (երկվորյակներ):

Հեղուների մեջ անհզականներ առաջանում են հիմնականում հոգնակի թվաձևերի փոխաբերական կիրառման հետևանքով, երբ դրանց բառիմաստի մեջ իմաստային փոփոխություն է տեղի ունենում: Այսպես, ֆրանսերենում հավաքականակերտ մասնիկները գործուն չեն, դրա փոխարեն առանձնապես գործուն են անհզական հավաքականները, որոնք ավելստում են մեծ մասամբ այն հոգնակի թվաձևերի միջոցով, որոնք ունեն այլ նշանակություն, քան համապատասխան հոգնակի ձևը: Հաճախ նոր նշանակությունը զարգանում է բառիմաստի նեղացման, կոնկրետացման հետևանքով, օրինակ՝ *parent* «ազգական» — *parents* «ծնողներ», *le vîeux* «սեռունի» — *les vîeux* «ծնողներ» և այլն (տե՛ս АУ, СБСМ, 90): Այս միտումը ֆրանսերենում այնքան ուժեղ է, որ գնալով ավելի ու ավելի շատ գոյականներ են սկսում կիրառվել որպես հոգնակի թվաձևեր, իսկ հավաքականներն անընդհատ ավելանում են ի հաշիվ հոգնակի ձևերի, որոնք հավաքական նշանակություն են ձեռք բերում իրենց բառիմաստի մեջ կատարված իմաստային տեղաշարժի հետևանքով (ն. տ., 88):

Անհզական հավաքականները իմաստային տեսանկյունից բազմազան են: Դրանցից շատերն անհզական են կոչվում վերապահումով, քանի որ կարող են դեռևս պահպանած լինել համապատասխան հզակի ձևը, սակայն պետք է ստել, որ հզակի ձևը շատ ավելի սակավ է հանդիպում, և, բացի այդ, հավաքական երանգներ ունեցող հոգնակի ձևի բառիմաստը երբեք նույնական չէ հզակի թվաձևի ունեցած բառիմաստի հետ (դեպքերի ճնշող մեծամասնության ժամանակ տեղի է ունենում բառիմաստի նեղացում):

Հավաքական նշանակությամբ հոգնակի ձևերը կարող են ցույց տալ.

1. Մարդկանց զանազան բազմություններ, որոնք կարող են համախմբված լինել ըստ գաղափարական, կրոնական, քաղաքական կամ բնակավայրի պատկանության, ազգակցական, բարեկամական կապերի և այլ հատկանիշների, օրինակ՝ կառմիրներ, սև շապկավորներ (ֆաշիստներ), պահպանողականներ, ազատամիտներ (անգլիական պառլամենտում), բողոքականներ, պրիզուներ, սկալուներ (կրոնական աղանդներ), նախնիներ, ծնողներ: Դրանցից շատերն արդեն հնաբանություններ են՝ սև դումայականներ, պուրիտաններ (մաքրամուղներ), խաչակիրներ, հավասարաբներ (levellers), կոնկիստադորներ և այլն:

2. Տարբեր առարկաների բազմություններ: Հայերենում, դրանք փոքրաթիվ են, օր.՝ զանգուրներ, խոպուպներ, սանձեր, հուշեր, նոթեր, գրառումներ, ռուսերենում բավական տարածված են՝ *санки, лосжи, ворота, бусны, межуары, кандалы, декези*:

3. Հավաքականներ նյութային նշանակությամբ [«նյութային-հավաքական անհզականներ» (ՀՊ. ԳԲԿՀ, 72)]. *дыху, румяна, дорожки, мозги, хлебопродукты*: Հայերենում սովորաբար այս իմաստն արտահայտում են եղեն հավաքականակերտ ածանցով կազմությունները (մսեղեն, կաթնեղեն, բրդեղեն և այլն), սակայն կան նաև հոգնակի կազմություններ՝ նյութային-հավաքական նշանակությամբ. արդյունաբերական ապրանքներ, ֆիմապրանքներ, բուժաֆիզիկատներ, առանձնապես տարածված են քիմիայում և կենսաբանության մեջ որպես տերմիններ. ալկալիներ, ածխաջրատներ, կաթնասուներ, միաբջիջներ, հոգվածոտանիներ, բարդաձողկավորներ և այլն: Հաճախ անհզականները ցույց են տալիս ինչ-որ բանի մնացորդներ, անպետք իրերի

կույտեր, հնոտի, օրինակ՝ ռուս *объедин, помощи, отбросы, развалины* (հմմտ. գրաբարյան ջարդոնք, կոճոնք, փշրանք, ոսկրանք):

4. Անհզականների վերացական-հավաքական նշանակությամբ. հիմուններ, սկզբունքներ, (մարդկային) հեռավորություններ, ընդունակություններ, հեռավորություններ և այլն, ռուս. *породы* (հմմտ. երկունք), *оскобки*:

5. Աշխարհագրական անուններ. լեռնաշղթաների անուններ՝ Ալպեր, Կարպատներ, Հիմալայներ (հմմտ. գերմ. *Gebirge* «լեռներ», ինչպես նաև հայ. շունգլիներ, սավաններ և այլն):

Հավաքական և հոգնակի (անհղական) ձևերի իմաստային մոտիկության մասին վկայում է այն փաստը, որ որոշ հավաքական անհզականների մոտ բազմությունը այն աստիճան է ընկալվում իբրև մեկ միասնական ամբողջություն, որ դրանք սկսում են ընկալվել իբրև հզակի բառաձևեր, օրինակ՝ գերմ. *die Bibel*—լատ. *bibilia* «գրքեր», *der Keks*—անգլ. *cakes* «թխվածքներ, տորթեր» (KD, GDGS, 170), հայերենում գրաբարյան անհզականներն այժմ դիտվում են իբրև հզակի ձևեր. երկունք, տարերք, բերք, վարք և այլն:

Հավաքական նշանակությամբ կիրառվում են ոչ միայն հոգնակի, այլև՝ հզակի բառաձևերը, ընդ որում դրանք սովորաբար ունենում են կիրառության իրենց ոլորտը, օրինակ, հզակի ձևերը հիմնականում ունեն տերմինաբանական նշանակություն, կիրառվում են իբրև տեսակի անուն, օրինակ՝ կենսաբանությունում մեջ. «Կետը կաթնասուն կենդանի է», «Կաղնին մեր անտառներում հաճախ է հանդիպում», քիմիայում. «Թթվածինը անհոտ, անգույն գազ է», մաթեմատիկայում. «Գումարելիների տեղերը փոխելիս՝ գումարը մնում է անփոփոխ», երկրաչափության մեջ. «Ուղղանկյուն եռանկյան երեք անկյունի քանակությունները հավասար է էջերի քառակուսիների գումարին» և այլն:

Այս կամ այն բառաձևի հաճախակի կիրառությունը կախված է նաև տրվյալ պատմական ժամանակաշրջանից: Այսպես, մեր երկրում հեղափոխական իրադարձությունների ժամանակ, հեղափոխական կոչերում, թողուցիկներում բավական հաճախ հանդիպում էր հզակի թվաձևեր՝ ընդհանրական հավաքական նշանակությամբ. «Բանվորն ու գյուղացին պայքարում են ձեռք-ձեռքի տված», «Գյուղում ոտքի է ելել հողի աշխատավորը», «Բանվորը ոչինչ չունի կորցնելու» և այլն:

Եզակի թվաձևեր հաճախ հավաքական նշանակություն է ձեռք բերում նախադասության մեջ փոխաբերական իմաստով կիրառվելու, նախադասությանը ոճային նրբերանգներ հաղորդելու հետևանքով. «Ամեն ժամանակ ունի իր նորն ու հինը, իր լավն ու վատը» (ԳԹ. 25. IV. 1987), «Որ այս աշխարհում, քմահաճ ու չար՝ պետք չէ, որ մարդը հեկեկա անքուն», «Զգում էինք, որ մի մութ թընամի նենգ, դարան մտած, պահվել է հեռուն» (ԵԶ, ՊԲ, 16, 20): Եզականաձև հավաքականների շարքն են դասվում խումբ ցույց տվող բառերը. հոտ, երամ, խումբ, զունդ, բանակ, զորք և այլն: Այս տիպի բառերը գրաբարում պահանջում էին հոգնակի ստորոգյալ. «Ազգն Արշակունեաց յաղագս անարժան գործոց իւրեանց, ըստ բանի սրբոյ առն Աստուծոյ՝ ներսէսի՝ գտան հղեալք ընկեցիկք յերեսաց Աստուծոյ» (ՂՓ, 2Պ, 26):

Որոշ լեզուներում նման բառերի կիրառությունը կապված է շարահյուսական բարդությունների հետ: Այսպես, անգլերենում որոշ հավաքականների եզակի գործառություն ունեն: Դրանք կարող են ստանալ հոգնակիություն (բաժանականություն) ցույց տվող լրացումներ, օրինակ՝ *twenty people* (քսան մարդիկ), *many cattle* (շատ նախիրներ), *two Indian police* (երկու հնդիկ ոստիկաններ) և այլն: Մի շարք լեզվաբաններ նշում են, որ բերված օրինակներում հավաքական անունները միանում են լրացումների հետ՝ խախտելով քերականական օրենքները (տե՛ս, օրինակ, HS, NEG, 55): Սակայն հարցի նկատմամբ այլ մոտեցում ունի Բ. Բլիշը: Նա ցույց է տալիս, որ այնպիսի բառերում, ինչպիսիք են *police* (ոստիկանություն), *people* (մարդիկ) և այլն, բառիմաստը զարգացրել է բաժանական հոգնակիի նշանակություն (տե՛ս ԲՄ, CAԶ, 110): Նման բառերը, ի տարբերություն սովորական հավաքական անուն-

ների (collective nouns), անվանում են բազմություն անուններ (nouns of multitude) և դրանց գործառությունը կապված է շարահյուսական դժվարությունների հետ²:

Այսպիսով, հավաքականությունը սովորաբար դիտվում է երկու հայեցակետով՝ 1. որպես առանձին միավորների համախմբում մեկ ամբողջության մեջ (սովորաբար ստորոգյալը եզակի է), 2. առանձին միավորների բազմություն, որոնք կազմում են տվյալ ամբողջությունը (ստորոգյալը հոգնակի է): Եթե առաջին դեպքում բաժանականության գաղափարը հետին պլան է մղվում՝ շեշտելով ամբողջությունը որպես մեկ ընդհանուր միավոր, ապա երկրորդ դեպքում նշվում է ոչ միայն բազմությունը, այլև՝ այն կազմող յուրաքանչյուր միավորը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԹ—Գրական թերթ:

ԳՊ, ՀՄՄՀԲ—Գ. Պետրոսյան, Հավաքականակերտ մասնիկները միջին հայերենում և բարբառներում («Բանբեր Երևանի համալսարանի», 1987, № 3):

ԵՅ, ՊԲ—Եղիշև Ջարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, 1984:

ՀՊ, ԳԲԿՀ—Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:

ՂԲ, ՀՊ—Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982:

ՄԽ, ՀՊ—Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981:

ԱԴ, СРЛЯ—А. Гвоздев, Современный русский литературный язык, т. 1, М., 1967.

ԱԻ, ГЗ—А. Исаченко, О грамматическом значении («Вопросы языкознания», 1961, № 1):

ԱԿ, ГКИС—А. Колесников, Грамматические категории имен существительных русского языка в плане отображения действительности, канд. дис., Симферополь, 1973.

ԱԿ, ГССС—А. Колесников, О грамматическом статусе собирательных существительных русского языка («Русский язык», 1976, № 6):

ԱՄ, СВСМ—А. Умаров, Средства выражения совокупного множества в современном французском языке, канд. дис., М., 1972.

ԱՄ, ИССФР—А. Шарапов, Имена собирательные в системе и функциональной реализации современного немецкого языка, канд. дис., Минск, 1983.

ԱՄ, ОСРЛЯ—А. Шахматов, Очерк современного русского литературного языка, М., 1941.

ԲԻ, САЯ—Б. Ильиш, Современный английский язык, М., 1948.

ВВ, РЯ—В. Виноградов, Русский язык, М., 1972.

ВД, КЧСЯ—В. Дегтярев, Категория числа в славянских языках, Ростов и/Дону, 1982.

ВП, КМЯ—В. Панфилов, Категории мышления и языка. Становление и развитие категории количества в языке («Энгельс и языкознание», М., 1972):

ВП, ТККЧ—В. Панфилов, Типология грамматической категории числа и некоторые вопросы ее исторического развития («Вопросы языкознания», 1976, № 4):

ЗК, ССАЯ—З. Котова, Собирательные существительные в английском языке, канд. дис., Л., 1963.

ЛФ, КСИС—Л. Фролова, Категория собирательности имен существительных в русском языке, канд. дис., Л., 1950.

ОЕ, ФГ—О. Есперсен, Философия грамматики, М., 1958.

ՕԼ, ՖՏԿՏ—Օ. Лешкова, Функционально-семантическая категория собирательности в польском и русском языках, канд. дис., М., 1984.

² Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս A. Bain, A Higher English Grammar, London-New York and Bombay, 1904, J. Nesfield, Manuel of English Grammar and Composition, London, 1946, H. Poustma, Grammar of late Modern English, II, Section I, P. Noordhoff-Groningen, 1914:

- HS,NEG— H. Sweet, A New English Grammar, part I, Oxford, 1940.
KD,GDGS— K. Duden, Grammatik der deutschen Gegenwartssprache, Leningrad, 1962.
JS,PIN— J. Schmidt, Die Pluralbildungen der Indogermanischen Neutra, Weimar, 1889.

МНОЖЕСТВЕННОЕ ИЛИ СОБИРАТЕЛЬНОЕ?

ГАЯНЭ ПЕТРОСЯН

Резюме

Соотношение категории собирательности и категории числа очень сложно и многогранно. Категория множественности в основном сводится к противопоставлению двух главных типов множества—разделительного и собирательного.

На протяжении развития языка возможны переходы из одной группы множественности в другую.

Собирательность могут выражать некоторые существительные как во множественном, так и в единственном числе. Обычно существительные обоих чисел приобретают собирательные оттенки при переносном употреблении.